ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՈՐ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՈՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ, ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՊԳԳ-03

ք. Երևան «23» հունվարի 2018 թ.

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ «Նվիրատու»), որի անունից վարչության կանոնադրության հիման վրա գործում է վարչության աշխատակազմի ղեկավար՝ Վ. Հարությունյանը, մի կողմից և «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «Նվիրառու»), ի դեմս կանոնադրության հիման վրա գործող գլխավոր տնօրեն՝ Ս. Ստեփանյանի, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանգրով, ՀՀ կողմից ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի 01 բաժնի 06 խմբի 01 դասի «19. Պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի մշակում, ներդնում և կիրառում» ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ «Ծրագիր») Նվիրատուն սեփականության իրավունքով Նվիրառուին անհատույց հատկացնում է 27.100.000 (քսանյոթ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով դրամաշնորհ (ներառյալ ԱԱՀ-ն) ՝ սույն պայմանագրի N 4 հավելված՝ «Վճարման ժամանակացույցով» սահմանված ժամկետներում:

1.2. Աշխատանքներն իրականացվելու են սույն պայմանագրի N 1 հավելվածի՝ «Տեխնիկական բնութագիր» և N 2 հավելվածի՝ «Աշխատանքների կատարման ժամանակացույց» պահանջներին համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Նվիրառուի կողմից Աշխատանքների կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Նվիրառուի գործունեությանը:

2.1.2 Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ չընդունել կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը՝ սեփական հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Նվիրառուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5-րդ բաժնում նախատեսված տուգանքը.

2.1.3 Առանց կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել Նվիրատուին պատճառված վնասները, եթե՝

ա. Նվիրառուն ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն չի կարող պատշաճ իրականացվել,

բ. Նվիրառուն երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետները (դրանք նախատեսված լինելու դեպքում),

գ. Կատարված Աշխատանքների արդյունքները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում՝ պահանջել իրեն հանձնել անավարտ Աշխատանքների արդյունքները:

2.2 Նվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Նվիրառուին.

2.2.2. Կատարել Ծրագրի (դրա որևէ մասի) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.2.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.2.4. Կատարված Աշխատանքների մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն կատարված Աշխատանքները (կամ դրանց որևէ մասը) համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Նվիրատուն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում այդ մասին գրավոր ծանուցում է Նվիրառուին:

2.3 Նվիրառուն իրավունք ունի՝

2.3.1 Կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի արդյունքը Նվիրատուի կողմից ընդունվելու դեպքում՝ նրանից պահանջելու վճարել Նվիրառուին հասանելիք գումարները.

2.3.2 Նվիրատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել Նվիրառուին պատճառված վնասները:

2.4 Նվիրառուն պարտավոր է

2.4.1 Իրականացնելով Նվիրատուի կողմից տրամադրված գումարների հաշվառում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հանրային հատվածի կազմակերպությունների համար սահմանված հաշվապահական հաշվառման ստանդարտին համապատասխան.

2.4.2 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով, իսկ հաշվետու տարվա արդյունքներով պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով չօգտագործված ֆինանսական միջոցները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

2.4.3 Կատարել Աշխատանքների կատարման բացահայտված թերությունների վերացման նպատակով Նվիրատուի կողմից տրված ցուցումները.

2.4.4 Սույն պայմանագրով սահմանված կարգով Նվիրատուին ներկայացնել Աշխատանքների կատարման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5 Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Նվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6 Աշխատանքների որևէ մասի կատարման մասին հաշվետվությունները Նվիրատուի կողմից հիմնավոր պատճառներով չընդունվելու դեպքում Նվիրառուն պարտավորվում է անվճար՝ Նվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՈՐԵՎԷ ՄԱՍԸ ՆՎԻՐԱՏՈՒԻ ԸՆԴՈՒՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Աշխատանքները կամ դրանց որևէ մասը Նվիրատուի կողմից ընդունվում է դրա մասին սույն պայմանագրի N 3 հավելվածում բերված ձևի՝ հանձնման-ընդունման արձանագրության, Կողմերի ստորագրմամբ ու կնքմամբ:

3.2 Նվիրառուն յուրաքանչյուր եռամսյակ միջոցառումների ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրատուին է հանձնում միջոցառումների վերաբերյալ իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակը (Հավելված N3):

3.3 Կատարված Աշխատանքները կամ դրա որևէ մասը սույն պայմանագրի N 1 հավելվածով և Աշխատանքների կատարման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում Նվիրատուն 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում, կնքում և Նվիրառուին է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը:

3.4 Կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը սույն պայմանագրի N 1 հավելվածով և (կամ) Աշխատանքների կատարման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում Նվիրատուն 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրառուին է ներկայացնում Աշխատանքները կամ դրանց որևէ մասը չընդունելու պատճառաբանված գրավոր մերժում, մատնանշելով անհամապատասխանությունները և սահմանելով Աշխատանքների կամ դրանց որևէ մասի վերստին կատարման ողջամիտ ժամկետ:

3.5 Կատարված Աշխատանքները կամ դրանց որևէ մասը համարվում է Նվիրատուի կողմից ընդունված, եթե դրա հանձնման-ընդունման արձանագրությունը Նվիրառուից ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Նվիրտուն չի կատարում սույն պայմանագրի 3.3-րդ կամ 3.4-րդ կետերով նախատեսված գործողություններից որևէ մեկը:

3.6 Կատարված Աշխատանքների կամ դրանց որևէ մասի հետ կապված վերջնահաշվարկները Կողմերի միջև կատարվում են յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Սույն պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Նվիրառուն պարտավորվում է Նվիրատուին փոխհատուցել Աշխատանքների չկատարված մասի չափով և վճարել տուգանք՝ Աշխատանքների չկատարված մասի համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Նվիրառուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նվիրատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Նվիրառուին վճարվելիք գումարներում:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ պայմանագրի դրույթները գործում են 2018թվականի հունվարի 1-ից ծագած կողմերի փաստացի իրավահարաբերությունների վրա:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է այնպիսի արտակարգ ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Նման իրավիճակներ են հանդիսանում մասնավորապես՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, զանգվածային հասարակական անկարգությունները, գործադուլները, հաղորդակցության համակարգերի աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով Կողմերի պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունն անընդմեջ շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

7.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված վեճերը և սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.4 Սույն պայմանագիրը կազմված է 5 թերթից և 5 թերթ հավելվածներից կնքվում է երկու հավասարազոր օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմին:

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրատու՝ Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, ՀՎՀՀ 02528489, հասցեն՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4, Հ/Հ 900011019032 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական վարչության Երևանի թիվ 1 բաժանմունք

Նվիրառու՝ «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը՝ N 222.210.00408, գրանցման ամսաթիվը 08. 10.2004 թ., վկայական N 03Ա085321, տրված 23.09.2009 թ., ՀՎՀՀ՝ 02562123 իրավաբանական և գործունեության հասցեն՝ ք. Երևան, Զաքիյան 10, հաշվարկային հաշիվ N 157000330270100 «Ամերիաբանկ ՓԲԸ-ում, հեռախոս՝ 56-32-46:

Նվիրատու՝

Վ. Հարությունյան

Կ. Տ.

Նվիրառու՝

Ս. Ստեփանյան

Կ. Տ.

Հավելված N 1
«23» հունվարի 2018
թ. N ՄԳԳր-03 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Նվիրատուն կազմակերպելու է պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի (այսուհետ՝ «Համակարգ») մշակումը, ներդնումը և կիրառումը, հետևյալ պահանջներին համապատասխան.

1. Համակարգը հանդիսանալու է պետական սեփականության (ներառյալ՝ տարաբնույթ գույքը, արժեթղթերը, մտավոր սեփականության օբյեկտները, առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում բաժնեմասերը, առևտրային կազմակերպությունների արժեթղթերը և այլն) վերաբերյալ թվայնացված տեղեկատվության ըստ առանձին բաղադրիչների (նկարագրություն, զանազան բնութագրիչներ, իրավական և ժամանակագրական բնույթի տվյալներ, սխեմաներ, հատակագծեր, լուսանկարներ, տեսաձայնագրություններ, իրավական բնույթի և այլ նյութեր) միասնական էլեկտրոնային շտեմարան, որը կառավարվելու է համակարգչային սերվերից (2 պատասխանատու օպերատորների միջոցով), իսկ դրա օգտագործումն իրականացվելու է Համակարգին տարբեր եղանակներով (այդ թվում՝ ինտերնետային ցանցի միջոցով) միացված համակարգչային տերմինալներից (որոշակի քանակությամբ):

2. Համակարգում պահպանվող տեղեկատվության նախապես որոշվող առանձին տարրերը պետք է հասանելի լինեն հասարակայնության համար, պետական գույքի կառավարման ոլորտում ՀՀ կառավարության լիազոր մարմնի (ներկայում՝ Նվիրատուն է) ինտերնետային կայքում այդ նպատակով համապատասխան նոր էջ ստեղծելու եղանակով:

3. Համակարգին միացված ցանկացած առանձին տերմինալի համար կարող են սահմանվել դրանից օգտվելու սահմաններ, որոնք թույլ կտան այդ տերմինալից կատարել միայն հստակ սահմանված գործողություններ (օրինակ՝ տեղեկատվության ներբեռնում, որոնում, խմբագրում, դիտում, տպագրություն և այլն, հաշվետվությունների ու վիճակագրության կազմում և այլն) և միայն Համակարգի որոշակի հատվածներում (Համակարգի առանձին բաժիններ, որոշակի գույք կամ գույքի տեսակներ ու խմբեր և այլն):

4. Համակարգ մուտք գործելու ու դրանից օգտվելու համար յուրաքանչյուր անձին շնորհվելու են առանձին ծածկանուն և գաղտնաբառ, որոնց գործողության ժամկետը կարող է սահմանափակվել:

5. Համակարգից օգտվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր անձի (ներառյալ՝ պատասխանատու օպերատորները) համար սահմանվելու է առանձին աշխատանքային միջավայր (Համակարգից օգտվելու սահմաններ) որը թույլ է տալու նրան կատարել միայն հստակ սահմանված գործողություններ (օրինակ՝ տեղեկատվության ներբեռնում, որոնում, խմբագրում, դիտում, տպագրություն և այլն, հաշվետվությունների ու վիճակագրության կազմում և այլն) և միայն Համակարգի որոշակի հատվածներում (Համակարգի առանձին բաժիններ, որոշակի գույք կամ գույքի տեսակներ ու խմբեր և այլն):

6. Պատասխանատու օպերատորներն իրավասու են լինելու կատարել ինչպես ամբողջ Համակարգի ու դրան միացված ցանկացած առանձին տերմինալի (տերմինալների առանձին խմբերի) ցանկացած բնույթի կարգավորումներ, այնպես էլ Համակարգից օգտվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր անձի (անձանց առանձին խմբերի) համար սահմանել անհատական աշխատանքային միջավայր:

7. Համակարգը պետք է ապահովի.

- պետական սեփականություն հանդիսացող օբյեկտների վերաբերյալ, դրանց հաշվառման ներկայում գործող համակարգի տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով Համակարգ ներ-

բեռնելու և դրա ու Համակարգ ներբեռնվող այլ տեղեկատվության հետ Համակարգում սահմանված բոլոր տեսակի գործողությունների կատարման հավասար հնարավորություններ,

- Համակարգում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր առմամբ 30000 օբյեկտների վերաբերյալ (այդ քանակը հետագայում մինչև 60000 աճելու հնարավորությամբ՝ առանց Համակարգի տեխնիկական հնարավորությունների ավելացման) թվով մինչև 100 տարբեր բաղադրիչներ պարունակող տեղեկատվության պահպանման հնարավորություն,
- տեղեկատվության ձևաչափերը և դրա առանձին բաղադրիչները սահմանելու (ներառյալ՝ քանակների ու տեսակների ավելացում, նվազեցում, խմբագրում և այլն) հնարավորություն,
- պետական սեփականության յուրաքանչյուր միավորի վերաբերյալ Համակարգում պահպանման ենթակա տեղեկատվության և դրա բաղադրիչներից յուրաքանչյուրի համար հատկացվող համակարգչային հիշողության առավելագույն ծավալները սահմանելու հնարավորություն (սկզբնական ցուցանիշը՝ 100 Մբայթ՝ 1 միավորի համար, այդ ծավալը հետագայում մինչև 200 Մբայթ՝ աճելու հնարավորությամբ՝ առանց Համակարգի տեխնիկական հնարավորությունների ավելացման),
- պետական սեփականության յուրաքանչյուր միավորի (միավորների առանձին խմբերի) համար Համակարգ ներբեռնելու ենթակա տեղեկատվության էլեկտրոնային ձևի կառուցվածքը և բաղադրությանը ներկայացվող պահանջները սահմանելու հնարավորություն,
- Համակարգի բոլոր տերմինալներից Համակարգի հետ ցանկացած գործողություններ կատարելու հավասար հնարավորություններ,
- բոլոր տերմինալներում Համակարգ ներբեռնվող տեղեկատվության էլեկտրոնային ձևերի կազմման և դրանք ցանկացած այլ տերմինալ (տերմինալներ) փոխանցելու հնարավորություն,
- Համակարգում պահպանվող տեղեկատվության ցանկացած բաղադրիչով (բաղադրիչների խմբով) որոնումներ կատարելու հնարավորություն,
- Համակարգում պահպանվող տեղեկատվության ցանկացած բաղադրիչով (բաղադրիչների խմբով) ցանկացած առանձին ձևի հաշվետվություններ կազմելու հնարավորություն,
- պետական սեփականության օբյեկտների վերաբերյալ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տրամադրության տակ (գույքի կադաստրային գործերում) գտնվող տեղեկատվությունն ու նյութերը առցանց դիտելու, դրանք Համակարգում պահպանելու ու տպագրելու հնարավորություններ,
- ՀՀ պետական ռեգիստրի տրամադրության տակ (իրավաբանական անձանց գործերում) գտնվող տեղեկատվությունն ու նյութերը առցանց դիտելու, դրանք Համակարգում պահպանելու ու տպագրելու հնարավորություններ այն առևտրային կազմակերպությունների մասով, որոնց բաժնետոմսերի որևէ քանակը կամ կանոնադրական կապիտալում որևէ բաժնեմասը հանդիսանում են պետական սեփականություն:

8. Անհրաժեշտության դեպքում Համակարգի մշակմանը, ներդրմանը և կիրառմանը կարող են ներգրավվել համապատասխան մասնագետներ և մասնագիտացված կազմակերպություններ, դրանց հետ սահմանված կարգով աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքելու եղանակով:

Նվիրատու՝	***Նվիրառու՝***
_____ ***Վ. Հարությունյան***	_____ ***Ս. Ստեփանյան***
Կ. Տ.	***Կ. Տ.***

Հավելված N 2
«23» հոկտեմբեր 2018 թ.
N ՄՀՊ-03 պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Աշխատանքների և դրանց գնահատման քանակական ցուցանիշների անվանումները	Քանակը			
		3 ամիս	6 ամիս	9 ամիս	12 ամիս
1.	Պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի մշակում, ներդնում և կիրառում	1			

Ծանոթություն՝ ՀՀ կառավարության 28.12.2017 թ. N 1717-Ն որոշմամբ ժամկետայնություն սահմանված չէ:

Նվիրատու՝

_____ Վ. Հարությունյան

Կ. Տ.

Նվիրառու՝

_____ Մ. Ստեփանյան

Կ. Տ.

Հավելված N 3
«23» հունվար 2018 թ.
N ՊԳԳ-03 պայմանագրի

Նվիրատու՝
ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, ՀՎՀՀ 02528489, հասցեն՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4, Հ/Հ 900011019032 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական վարչության Երևանի թիվ 1 բաժանմունքում, հեռախոս՝ _____

Նվիրառու՝
«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ՀՎՀՀ՝ 02562123 իրավաբանական և գործունեության հասցեն՝ ք. Երևան, Զաքիյան 10, հաշվարկային հաշիվ N 157000330270100 «Ամերիաբանկ ՓԲԸ-ում, հեռախոս՝ 56-32-46:

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N _____
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ
«____»_____ 2018 թ.

Պայմանագրի անվանումը՝ «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին»:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» հունվարի 2018 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Նվիրատուն, ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի ղեկավար՝ Վ. Հարությունյանի և Նվիրառուն, ի դեմս «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն՝ Ս. Ստեփանյանի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «___»_____ 2018 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի N_____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Աշխատանքները համապատասխանում են պայմանագրով սահմանված նկարագրին և Աշխատանքների կատարման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Նվիրառուն «___»_____ 2018 թ-ից մինչև «___»_____ 2018 թ. ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ Աշխատանքները.

N	Աշխատանքի համառոտ նկարագիրը	Աշխատանքի քանակական ցուցանիշները	Աշխատանքի կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազ. դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
	Ընդամենը	.....	.....		

Նվիրատու՝
_____ ***Վ. Հարությունյան***
Կ. Տ.

Նվիրառու՝
_____ ***Ս. Ստեփանյան***
Կ. Տ.

Հավելված N 4
«23» հոկտեմբեր 2018 թ.
N ՄՊՊ-03 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Աշխատանքների անվանումները	Վճարման ենթակա գումարը (հազ. ՀՀ դրամ)			
		3 ամիս	6 ամիս	9 ամիս	12 ամիս
1.	Պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի մշակում, ներդնում և կիրառում	1 501,3	13 739,7	15 241,0	27 100,0

Նվիրատու՝

_____ Վ. Հարությունյան

Կ. Տ.

Նվիրառու՝

_____ Ս. Ստեփանյան

Կ. Տ.